Վ. ԱՐԱՄՈՒՆԻ

# ԿԱՆԱՉ ՅԵՐԳԵՐ



ՊԵՏՀՐԱՏ

891.99
Ար-82

1393

Արազի Ա.
Ընտիր յերկեր

1938 թ. 2 հ.

891.99
Ա-85

ՎԱՀԱՆ ԱՐԱՄՈՒՆԻ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

# ԿԱՆԱՉ ՅԵՐԳԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5183

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԱՅՐԵՆԻՔ ԻՄ ԼՈՒՍԵՂԵՆ

ԽՍՀՄ-ի Նոր Սահմանադրության առթիվ

Ա.

*Հայրենիք իմ լուսեղեն*
*Այս երգերս, որ այդպես*
*Աղբյուրի պես հեղեղվեց,*
*Յերգերիս հետ կյանքս ել քեզ։*
*Իմ հույզերի հուր լեզուն,*
*Յեվ խոհերս հրեղեն,—*
*Բոլորը քեզ սիրասուն,*
*Հայրենիք իմ լուսեղեն։*

Բ.

*Յես իմ կյանքը կզինեմ*
*Սվինով սուր ու զորեղ,*
*Քո հանգիստը, որ հսկեմ—*
*Հայրենիք իմ լուսեղեն։*
*Ու թեժ կրակ կդառնամ,*
*Որ թշնամուդ հրդեհեմ,*
*Լոկ քեզ համար ամրակամ,*
*Հայրենիք իմ լուսեղեն։*

Գ.

Քո զավակն եմ յես հերոս
Պայքարում այս հավիտյան,
Ուր յերգերիս նետերով,
Ընդանում եմ գնդի կյանք.
Յեվ յերբ հնչի առաջին,
Համազարկը մարտերի,
Միշտ պատրաստ եմ յես կանչին—
Առաջնորդին պանծալի։

Դ.

Կշարժնեմ յերգերս հորդ
Պողպատակուռ պատնեշներ,
Վոր պաշտպանեմ առաջնորդ,—
Ստալինին, վոր նշեց—
Նոր ճանապարհ վառ բերկրանք—
Քեզ հայրենիք լուսեղեն՝
Վոսկեծուն մի նոր կյանք,—
Ժողովրդին փառահեղ։

ՅԵ.

Ստալինը կամքով հուր
Խնդությունով լի առ լի,
Հարթում է հար լայնահուն
Գալիքի պայծառ ուղին։
Իսկ տողերիս հեղեղն ել
Քշում է հինը անշուք,
Հայրենիք իմ լուսեղեն՝
Նորը ցնծում է իշխում։

Ջ.

*Իմ աչքերը լինեն թող*
*Լուսարձակներ վառ հատու,*
*Պատռեն ամպեր, մութ ու քող*
*Հայրենիք իմ լուսատու։*

1936 թ. օգոստոս
Երևան

---

## ՅԵՐԳ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

1.

*Ահա բացվում է նորից*
*Լուսապայծառ ցողաթուրմ,*
*Առավոտն այս, արև—*
*Վահանն առած իր ուսին,*
*Ուր փողողում է չորս դին*
*Յեվ յերգ, և՛ սեր, խնդություն,*
*Գունազեղվում են ահա*
*Սար ու յեթեր միասին։*

2.

*Գեղածիծաղ յերկրիս*
*Զավակներն ենք մենք խնդուն,*
*Վոր փողոցով քայլում ենք*
*Սրտերով մեր արևավառ,*
*Անընկճելի մեր կամքից*
*Մայթն ու փողոցն է թնդում,*
*Յերբ անցնում ենք ջոկ առ ջոկ*
*Շարքերով խիտ վոնց անտառ։*

3.

Լայն է յերկիրը մեր այս
Ու այնքան ջինջ, հարազատ,
Ուր կան դաշտեր բերքաշատ
Վեր խոյացող շենքեր շեն,
Այս ամենի տերն ենք մենք
Շունչ ենք քաշում մենք ազատ,
Ստալինյան արևի—
Կամարի տակ հոյաշեն։

4.

Մեր ամենքի սրտերում
Կենսածիծաղ մի գարուն,
Մկաններում մեր ջլուտ
Յեռնում է ուժը յեռում
Դասակարգիս համար հաղթ—
Յեվ մեր կամքում մաքառուն,
Կյանքն է շնչում որերի
Վոսկե ոծուն ու խնդուն։

5.

Ջերմ ենք ինչպես արևը
Մեր խինդն ասես լինի ծով,
Յեվ մեր ուժն է անցամաք
Ինչպես կապույտ մեծ ովկյան,
Կոմունիզմի վոսկեգույն
Դուռն ենք, կռում զնգոցով,
Մենք պայքար ենք, յերգ ու. սեր,
Յեվ լուսածիր պայծառ կյանք։

6.

Խորհրդային իմ յերկիր
Դու մեր սրտին հարազատ,
Մեր յերկրում է միայն,
Որ կյանքն է դարձել ուրախ,
Կյանքն է դարձել յերջանիկ—
Աշխատանքը սրբազան,
Մենք դարձել ենք ունեվոր
Եվ չենք քաշում վոչ մի ախ։

7.

Այս ամենի համար մենք,
Պարտական ենք մենք նրան,
Առաջնորդին այն մեր մեծ՝
—Քեզ հարազատ Ստալին,
Որ տվեցիր անսահման
Ազատություն հուրհուրան,
Յեվ հիմա յել դու մեզ հայր—
Խինդ ու ծիծաղ ես տալիս։

1937 թ.
Յերևան

## ՑԵՐԳ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՄԱՍԻՆ

### Ա.

Ի՞նչ է արևը վերին, ի՞նչ ջերմություն ունի նա,
Որ շողում է յերկնքի կապույտ ովկյանի վրա։
Ստալինն է հուր արև, և արևն այդ հուրհրան,
Շողում է վողջ աշխարհիս մարդկության սրտի վրա։
Ստալինը, արևն այդ կյանք է տալիս բոլորին,
Ու սերմանում սերմերը լուսապայծառ վառ կյանքի։
Նա յէ արևը մեր մեծ, առաջնորդը պանծալի,
Որ սնում է աճեցնում սերունդներին մեր անթիվ։

### Բ.

Ստալինյան արևի ջերմ շողերը քնքշաբար,
Ջերմացնում են բոլորիս, դարձնում հզոր անվեհեր։
Այդ արևով բարձրանում՝ գուրգուրվում են հայրաբար,
Խորհրդային մեր յերկրի թե մանուկը և թե ծեր։
Յեվ այդ հզոր արևին, հար հավիտյան յերկար կյանք։
Որ գծում է մեր ճամբան լուսապայծառ, ապահով։
Այդ արևն է փայլում վառ հորիզոնում հավիտյան,
Յեվ տալիս լույս, տալիս կյանք—վողջ աշխարհին,—
մարդկության։

1937 թ.
Յերևան

## Մ Ե Ծ   Մ Ա Ր Դ Ը

(Ներբող ՍՏԱԼԻՆԻՆ)

1.

...Յեվ այժմ յերբ յես փողոց եմ յելնում,
Ու նայում հսկա շենքերն իմ առջև
Բարձրանում են վեր, մեր պողպատակամ,
Ուժի և կամքի ծովում լիառատ։
Ահա քարտաշը, վորը տուֆն է հղկում,
Տուֆի վարդագույն ժպիտում կարմիր,
Մեծ Ստալինի հանճարն է փայլում
Ու գծում ճամբան վեհ հաղթանակի։
Իսկ վորմնադիրը, վոր քար է շարում,
Ու լցնում ցեմենտ, վոր նրանք ամրանան,
Հայր Ստալինի կամքն են կատարում,
Յեռանդուն ու ջերմ սիրով անսահման։
—Ահա քար ու ցեխ, դե՛ շարիր վարպետ,
Բյուր սրտերն են վառ բաբախում, խնդում,
Յերջանկության մեծ ճարտարապետ,
Հայր Ստալինն է մեզ ղեկավարում։
Ամեն ճակատում մեծ մարդը կրկին,
Քայլում է մեզ հետ, մեզ ղեկավարում—

Ու բերում մեզ կյանք և սերեր անգին՝
Սերմանում նորից համայն սրտերում։
Ու այդպես փռում ծիածանը վառ,
Ազատության ջերմ հավատով լեցուն,
Ինքն Ստալինը հաղթանակ է հար,
Ոգում, ցամաքում և թե հորդ ջրում։

2.

Նա, վոր կերտեց մի բանակ, կամքով լեռնացող,
Մեծ Լենինի հանճարով ու մարտնչող հար,
Ստալինը, վոր դարձավ խնդության բյուր ցոլք,
Ու փրկության ջեռ արև ժողովրդի համար։
Յեվ այդ անունը ահա վորպես ծիածան,
Յերջանկություն է բերում լույս ու այգեբաց,
Յեվ անունն այդ, վորպես վառվող լուսարձակ
Վարում է մեր մարտերը կրծքով լուսարաց։

3.

Ու բազմազգյա յերկիրն այս հաղթանակով լի հպարտ
Անունն այդ դարձրած վորպես դրոշ ու պատգամ,
Հաղթանակում է անկանգ ու ընթանում դեպի մարտ,
Այդ անունով վոնց փարոս, վոր վառվում է միշտ
անմար,
Մարտիկները քո հերոս. վորոնց հանիր դու վոտքի,
Պայքարի վառ յերգերով դարձան տերը յերկրի,
Ու բերեցին անսահման վառ խնդություն ու բերկրանք,
Յեվ տվեցին մեզ անմահ արևի պես վառվող կյանք։
Ու հիմա յել հավիտյան հավատարիմ լինելով,
Դու մեր արև, դու մեր կյանք, կպաշտպանենք քեզ
կրծքով։

Յեթե հարկը պահանջի մեր հարազատ Ստալին,
Վերջին կռվի կհանենք մեր ուժերին, բոլորին։
Յեվ անունն այդ Ստալին, շողշողում է վոսկեզօծ,
Հաղթանակի վեհափառ ուղիների բոցերում,
Յես էլ ահա անունն այդ, և թանկագին և հզոր,—
Վորպես պետ կպահեմ սրտիս անհուն խորքերում։

1937 թ.
Հոկտեմբերյան

---

# ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

## Ա.

Մեր յերկրի աղջիկները աչքերով պարզ, սև խաղող,
Աշխատանքից եք դառնում այնպես ուրախ ու խաղով։
Խնդությունն է վողողել ձեր սրտերը շատ մաքուր,
Փթթում եք դուք և աճում խորհրդային ջերմ ու հուր
Երկի տակ այնքան պարզ, յերկնքի տակ այնքան բիլ
Կառուցում եք ու թափում քրտինքի արծաթ կաթիլ։
Ու միաձույլ ձեր հոգով և սրտերով ինչպես վարդ,
Անօրինակ վերելքի դուք մարտիկներն եք արդար։

## Բ.

Ահա Արուսն ու Նինան, պահակները մեծ բերքի,
Վոսկեզօծ հասկն են հսկում վաստակն իրենց քրտինքի։
Վերից Վերան է իջնում պարաշուտով դեպի ցած
Շքանշանը կրծքին ինքը խնդությամբ արբած։
Զույն է կտավը է հոսում մեքենայից ուժ առած—
Հինան զգաստ ու արի դազգահներին թեվ տված,—
Մարտնչում է ու գործում ստեղծագործ իր մտքով,
Փայլում է հար լուսերես լուսապայծառ իր հոգով։

П 5183

Գ.

Հերոսներ են դառնում մեր աղջիկները յերկրիս
Ու նվաճում ամպերը խիզախությամբ քաջարի,
Մամլաքաթներ են դառնում, ձյունե բամբակի դաշ-
տերում,
Ու դաշտերի հերոսներ Դեմչենկոններ են ծնվում։
Վորպես գարնան շառաչուն ջրերի պես վարարած
Նրանց ուժը յելնում է հին որերի դեմ-դիմաց,
Հինը դարձնում են փոշի, հաղթանակը կարոտ
Հաղթություն է միշտ բերում առավոտից առավոտ։

Դ.

Մեր աղջիկներն այսպես են, ջերմ են ինչպես արևը,
Պարզ են ինչպես առավոտ վառ աստղազարդ յերկինքը,
Նրանց հոգին մաքուր է, նրանց կամքը մաքառուն,—
Նրանց սիրտն է բաբախում թեթև-թեթև ու առույգ։
Իսկ յես զգում եմ, զգում եմ նրանց ընթացքն այս
վեհ,
Նրանց ընթացքի հետ ել իմ սիրտը վեր է թռել,
Ու մեր կյանքի յերջանիկ լիահնչուն զիլ զարկին
Ուժս խառնում նրանց ուժին, աղջիկներին իմ
անգին։

1937 թ.
Յերևան

## Ո, ՎՈՍԿԵՄԱԶ ԻՄ ԱՇՈՒՆ

*Ո, վոսկեմազ իմ աշուն, դու կապուտաչ իմ աղջիկ,*
*Լիություն ես փռողել այգիներում՝ ամեն տեղ—*
*Խաղողը աչքով է անում աչիկներով իր վճիտ,*
*Վոսկեցոլ ու մեղրանուշ, վողկույզներով քաղցրհյութեղ:*
*Մեզ պարգել ես բերքերից և մրգերից վառ սինին*
*Լեցուն բերքով քաղցրահյութ՝ խաղող, խնձոր քաղցրանուշ,*
*Հետո կաթով արծաթե և փրփրուն վառ գինին,*
*—Ի՞նչ առատ է սեղանդ՝ վոսկե աշուն իմ անուշ:*
*Աշուն վոսկե իմ աշուն, վոր բերքերով ես հղի,*
*Առատության քաղցր մայր դու փռում ես խնդություն,*
*Ահա բաժակը լցրած համեղ գինով խաղողի,—*
*Մեր նոր կենացն ենք խմում,—Ստալինի՝ մեծ Մարդու:*

*1937 թ.*
*Երևան*

## ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

*Մանուկներ իմ լուսերես ու լույսի պես թանկագին,*
*Մայիսաբույր ծաղկի պես դուք բացվում եք որ-որի։*

*Աստղերի պես փայլում եք — վորթատունկի պես*
*փթթում,*
*Ու աճում եք թեվվում վեր դուրգուրանքով մեծ մարդու։*

*Յեվ ձեր կյանքը վոնց աղբյուր կարկաչում է ջինջ ու*
*պարզ,*
*Ու արեվն է համբուրում ձեր շուրթերը այնքան խաս։*

*Խաղ եք անում դուք անահ ու ժպտում եք վոնց մայիս,*
*Արտերի մեջ այս կանաչ վազվզում եք ծափ տալիս։*

*Իմ յերկրի պես անամպ միշտ աճում եք անթախիծ*
*Դուք լցվում եք խնդությամբ չունեք վո՛չ ցավ, վո՛չ*
*կսկիծ։*

*1937 թ.*
*Յերեվան*

---

## ՄԱՅՐԸ

Լարիկին

1.

Ինչպես արևն է գետնից դեպ վեր
Քաշում ծիլը մեր անգին հացի,
Այդպես էլ ահա քնքուշ մի ձեռք—
Քեզ է գուրգուրում սիրուն Լարիկ։

2.

Ո՜, խայտառաշ տղա, ո՛, վոսկե ծիլ—
Մեծացիր արագ և հասակ առ,
Խորհրդային քաղցր կյանքը ծծիր
Որերում մեր այս և՛ ջերմ և՛ վառ։

3.

Իսկ քո մայրն ո՛, անգին Մանեն—
Կրծքի տակ պահած վառ մի գարուն,
Սպասում է նա դեռ անհամբեր,
Գալիք փոքրիկ քաղաքացուն։

4.

Այդ մայրը, մայրը, որքան մաքուր,
Զգացմունքներով և լցված դեպի,—
Մանուկներին այդ, որոնք վաղը,
Անխոջ մարտիկներ դառնան պետի։

1936 թ.
Արարատ

## ՀՈՒՆՁԸ

1.

Գիշերը պարկեց վրանը կապույտ
Հասուն վոսկեվարս դաշտերի վրա,
Արթնացան քնից աստղերը պուտ-պուտ,
Կապույտ քաթանի վրանին թառած։
Յեվ արծաթագեղ լույսը լուսնյակի —
Լույս ծովիններով հոսեց լուսածիր,
Լուսից շողշողաց մեր հացն անգին,—
Որորվեց ինչպես դեռահասյան հղի։

2.

Ալիքվեց արտը ու լուռ խոնարհվեց
Լուսնի մահկի պես գերանդու ուժից,
Իսկ կոլխոզնիկը ցորենը դիզեց,—
Ցոլքով մաքրեց մամուռ ու թախիծ։
— Ու թող հասկերի ծիծաղն արծաթի
Ձեր սիրտը հոսի լցնի ափից-ափ,—
Ո՜վ, քաջ հնձվորներ, վոր լցած հնձի,
Դիզում եք հասկը մինչև լուսաբաց,—

3.

—Հնձեցեք հասկը, հնձեցեք արագ,—
Այստեղ էլ տանենք պայծառ հաղթանակ։

*1934 թ.*
*Հոկտեմբերյան*

---

## ԵՐԳ ԱՐԵՎԻ ՈՒ ԳԱՐՆԱՆ ՄԱՍԻՆ

Հողը բուրում է
Սև հողը թաց,—
Շիկնել է արևը
Իր կրծքով բաց·

Բացվում է գարունը—
Գարունը ուժի,
Պետք է դաշտերում—
Մեր ուժը խուժի։

Յերկաթե մի ձեռք
Կթերթի հողը—
Արևը թափի թող—
Իր լույսն ու շողը·

Արևի շողը—
Կերգի իր յերգը,
Կխոստանա գարունը,
Իր առատ բերքը։

Առաջուան գարունը, —
Կչերգի իր յերգը,
Կքամենք հողից—
Վոսկեշող բերքը։

1925 թ.
Հոկտեմբերյան

---

## ՊՈՒՇԿԻՆՅԱՆ ԳԻՇԵՐ

Ուշ է։ Իսկ գիշերը հալվում է մոմի պես։
Հոգնած եմ։ Ուզում եմ քիչ քնել ու հանգիստ —
Տալ հոգուն իմ պայծառ։ Ուշ է։—Գիշեր է կես,
Իսկ յես դեռ թերթում եմ, ինչքան էլ որ հոգնել—
Բաբախուն վառ սիրտն իմ, պետք է որ կարդամ յես
Հագենամ գրքովն այդ ու պատմությամբ անմար,
Որ ունեցել է մի սևագանգուր պոետ՝
Պարզության գագաթն այդ, ու բարձրունքն այդ հար։
Ահա է Լիցեյն։ Այստեղ այս ամայի
Պատերի մեջ է նա՝ իր որերից մաշել։
Սովորել է նա այստեղ։ Ու սրտովն իր համակ
Ըմբոստության փառքի սուր սվինը սրել։
Այսպես, ըմբոստության ազատության սիրով,
Նա դեռ յերգեր կոփեց, և հենց այդ ամայի
Լիցեյի մութ խոնավ պատերի մեջ անդիր
Սովորեց նա ատել թագավորին, - թագին։
Հենց այս տողերի մեջ, նա, պոետն է քայլում,
Ահա դեմս յելավ։ Ու խոսում է ինձ հետ,
—Վողջույն, ո՛վ պատանի՛, գիշեր է։—Դեռ կարդում
Ու թերթում ես յերգերն իմ հատու։ Ուր վորպես նետ-

Շառաչեցին ուժգին մրրիկների բոցում,
Ազատության սերն է, այստեղ մաքուր ու հեզ,
Կարդա, յեղիր խրոխտ — Ամրապնդվիր հրում,
Այդ իմ յերգերն են ու, կյանքս, սիրտս հրկեզ։
— Յես ատել եմ ցարին, նրա մահն ուզել,
Ու բորբոքվող կյանքի արշալույսներ յերգել։
Յես յեղել եմ ըմբոստ. ու շատ-շատ եմ հուզվել.
Ժամանակում հրոտ, յերգս է յեղել մի նետ։
— Ո՛վ պատանի, տեսա՞ր, դու անկումը ցարի,
Քո աչքերով ծավլի, խորը վոնց կապտալիճ, —
Յես չհասա դրան, բայց յես յեղա արի, —
Հոգուս ազատության վոսկե սափորով լի։
— Այո, մեր սիրելի. դու դանդրահեր պոետ
Մենք անկումը տեսանք, դաժան, դոռոզ ցարի,
Դեռ շաչում է յերգդ, վորպես հատու մի նետ,
Ու ներշնչում կռիվ, վոր մենք լինենք արի։
Պատասխանում եմ յես, հետո նայում եմ յետ,
Վոր խոնարհվեմ յես լուռ, սպառիչ իմ արևոտ,
Անհետանում է նա, իր մարմնով անհետ, —
Ու փռվում է իմ դեմ, նոր գիրք, նոր առավոտ։

Հոկտեմբերյան
1937 թ.

# ԿԱՐԱ—ԹԱՓԱ

(ՊՈԵՄ)

Երբ անցնում եմ դաշտերով, անտառներով այս
խշշուն,
Ու հասնում եմ Կարաուլ-Թափայի ժեռ կատարին
Կամուրջին ու Թափային՝ նրանց առումն եմ հիշում,
Ու կռիվը կատաղի Կարա-Թափում անառիկ։

1.

Ես հիշում եմ լեռներում և՛ կրակ էր և՛ կռիվ,
Թնդանոթն էր թյուն թքում—առավոտից առավոտ,
Դաշնակցական զորքերը, բռնել էին անառիկ
Կարաուլա Թափայի սև կատարն արևոտ։

Դաշնակցական մի բանդա, կամուրջի աջ թիկունքում
Նստել էր ու դիրքերն իր ամրացրել էր այնտեղ,
Համառում էին նրանք կես գիշերից մինչև լույս,
Թնդանոթն էլ շարունակ յերկաթ-կոկորդն էր քերում։

*
* *

Ու յերբ կրկին գիշերը հովանոցն իրա սև
Բաց էր արել լեռներում, կանաչազարդ դաշտերում,

Իր թևերն էր տարածել խավարը մութ ու անձև,
Հենց այդ պահին դադարեց կռիվը ահեղ լեռներում։

Իսկ լեռների գրկի մեջ մի քարաշեն խրճիթում,
Վաշտապետը հավաքած մարտիկներին քաջարի,
Փռած քարտեզն առաջին լուռ նայում է ու գծում,
Նոր ճամփաներ բաց անում՝ դեպի Թափան անտառիկ։

—Մեզ տրված է մի խնդիր, ինչ գնով էլ վոր լինի
Պետք է քշենք թշնամուն ու հետ մղենք կամուրջից,
Պետք է ճակատը պատռենք ու մոտենանք
Կորթնանին,
Սպասում են մեզ այնտեղ ապստամբված գյուղացին։

—Հարկավոր է շարժվել կամուրջն առնել անձայն
Ու հարվածել թշնամուն, խփել նրան թիկունքից,
Պետք է թափուն թշնամուն համառությամբ
դիմանանք,
Իսկ այս ճամբով մենք կանցնենք դեպի առաջ
կամուրջից։

—Այս ուղղությամբ մենք կառնենք Կարաուլա ու
Թափան
Ուր ամրացված է հիմա դաշնակցական մի բանդա,—
Վաշտապետն ասում է ու գծում ուղին հարձակման,
Ձեռքի մատիտն էր հարդում. դեպի լեռ տանող
ճամբան։

—Հարկավոր է իմանալ դիրքն ու ուժը թշնամու,
Ջոկատը մեր հետախույզ մենք հենց հիմա
կուղարկենք,

Մենք կփռենք նրանց դին լուսաբացի թեժ կռվում,
Ու Կարաուլ-Թափայի սեգ կատարը մենք կառնենք։

* * *

Նստած ձիեր փրփրաբաշ յերեք մարտիկ քաջարի,
Սամումի ու հողմի պես ուժգնորեն սլացան,
Ցավարի մեջ ձիերը գնդակների պես արի,
Անտառներով, լեռներով, դեպի կամուրջն անցան։

Նրանք ծանոթ են տեղին վաղ մանկության օրերից,
Նրանք շատ են վազվզել ու խաղացել անտառում,
Նրանք ծանոթ են ամեն, ամեն թփին ու քարին,
Հենց այդ ծանոթ վայրերից դեպի կամուրջն են
թռչում։

Սլանում են ու թռչում մերթ ուղիներ փոխելով,
Որ թշնամու չար աչքը չնկատի վրիպի,
Ու առաջ են ընթանում օձապտույտ ուղիով
Հեռուներից թողնելով բարակ փոշին ամպերի։

Փրփրեցին ձիերը ու քամու պես սլացան
Ահա հասան ձորի մոտ, Նրանք իջան ձիուց վար,
Ու ձիերը կապելով՝ իրենք իջան դեպի ցած,
Դեպի ձորը խորախոր ու կամուրջին մոտեցան։

—Զգուշությամբ սողացեք, մեկդ առվից թող անցնի,
Իսկ յես կանցնեմ կամուրջից փորսող տալով կգնամ,
Մենք աջ կողմում կամուրջի իրարու կհանդիպենք,
Ճերմակամազ ծերունին շշնջում էր աննկատ։

Մարտիկները ջոկատի զինվորներն այդ հասարակ,
Զորքթաք սողալով լուռ մոտեցան կամուրջին,

Պահակները քնած են, լռությունն է տիրել քար․
Հետախույզները մեր քաջ մոտեցան մի տնակի։

Կամուրջի աջ թևի տակ մի փայտաշեն տնակում,
Ուր շտաբն էր թշնամու պաշտպանական բանդայի,
Գեներալն ու սպան փռված քարտեզն են դիտում
Ու դավերի համար մութ՝ վորոշում են նոր ուղի։

—Հարկավոր է ջախջախել կարմիրների բանակին,
Ու չթողնել կամուրջը վոր ձեռքերից մեր գնա,
Կարաուլի դիմացից մենք կբանանք հորդ կրակ,—
Սպայի հետ խոսում էր գեներալն շտաբի։

Իսկ ձյունամաղ Ներսեսը, Արմենի հետ միասին,
Պատուհանի տակ չոքած այդ նենգ վճիռն են լսում,
Գեներալն խփելով իր սպայի աջ ուսին,
Ծիծաղում էր սրտապատ «կարմիրներին կճզմենք»։

—Յեթե զորքերը մեր քաջ, բռնեն ուղին նահանջի,—
Պատասխանում է սպան գեներալի ծիծաղին,
—Վո՛չ մի փախուստ, ո՛չ նահանջ...
Իսկ հակառակ դեպքումն էլ կամուրջը կպայթեցվի։

Գեներալն մռայլվեց կարկտաբեր ամպի պես,
Նրա միտքը պղտորեց սպան տված իր հարցով,
Գեներալն մոտեցավ պատուհանին, լրջատես,
Ու այնտեղից հեռացավ, պլանն այնտեղ թողնելով։

***

Չնկատեց թշնամին, ինչ վոր մի ձեռք բարձրացավ,
Ստվերի պես մոտեցավ պատուհանի փեղկերին,

Ինչ որ մի բան վերցրած, ձեռքը արագ դուրս
թռավ,
Մթությունն էլ այդ պահին ուրախությամբ լույս
տվեց։

Հետախույզները կարմիր, որ քիչ յերկյուղով
Լսում եյին սպային գեներալի հետ մեկտեղ,
Ծրագիրը թշնամու պատուհանից կորզելով,
Նրանք իջան կամուրջից դեպի ձորն այն ահեղ։

*
* *

—Զգուշությամբ սողացեք, չնկատեն հանկարծ մեզ,—
Շշնջում եր ծերունին փորսող տալով իջնում ցած,
Նրանք դառնում եյին յետ, ահա կամուրջն անցան
Ու մոտեցան ձիերին՝ անդնդախոր ձորի մեջ։

*
* *

—Այս ուղիով պետք ե մենք Կարաուլից հարձակվենք,
Ու ամրանանք Կորթ գյուղում,—գեներալն մրմռթաց,
Պատուհանին մոտեցավ, որ պլանը վերցներ…
—Իմ պլանը ինչ յեղավ,—գեներալը մռնչաց։

Մեկ ձախ, մեկ աջ շուռ գալով հայհոյում եր,
փորոնում
Իր պլանը հարձակման, որ չքացել եր արդեն.
—Ո՞ւր ե պլանս, Մկո,—շուռ եր գալիս ու փնտրում,
—Միթե քամին թռցրեց, պատուհանից ընկավ վայր։

Ցեվ գազազած գայլի պես գեներալն եր փրփրել,
Հայհոյում եր զորքերին, իր սպային շլացած,

Վոր նա հայացքն իր բութ գնդի գետին եր հառել,
Ու լսում եր հնազանդ տիրոջն իր շվարած։

*
* *

Ահա ձիերը նստած՝ վոնց թևավոր թռչուններ,
Կտրիճները մեր խիզախ գնում եյին դեպի յետ,
Ու քամու պես սրընթաց այնքան արագ են թռչում,
Մթության մեջ սլանում, վոնց աղեղից պոկված նետ։

Ու սլացող ձիերի քրտնաշաղախ բաշերից
Գոլորշին եր բարձրանում, ինչպես ծուխը յերդիկի,
Իրենց հետևում թողած արահետները փոշու,
Կտրիճներն են սլանում՝ ամուր կպած թամբերին։

*
* *

Դաշնակցական մի ջոկատ ահա ձորից դուրս յեկավ։
Նշմարվեցին սավիրներ, վոր նետի պես սրընթաց,
Ոձապտույտ գործելով սլանում եյին անտառ,—
Հենց այդ պահին գնդակն նրանց հետևից վորոտաց։

Գնդակն առավ Ազատին ու ձիուց վար գլորեց,
Ձին ծառս յեղավ՝ ընկավ վար՝ այդ թևավոր թռչող
ձին,
Իսկ ընկնողը մեղմորեն իր գլուխն որորեց,
—Յես ընկա վայր, մեռնում եմ, դուք թև առեք ու
թռեք։

Ընկերները հետախույզ թռչում եյին քար ու թուփ,
Միշտ հետ նայում կարոտով՝ ընկերոջն հիշելով,
Մոտենում եյին արդեն նրանք իրենց գյուղերին,
Թռչում, արագ սլանում, միշտ Ազատին հիշելով։

***

Իսկ այդ պահին շտաբում գեներալն էր հայհոյում,
Կատաղել էր, փրփրել արյունարբու գայլի պես,
—Նրանք տարան պլանը, հարկավոր է նոր գծում,
Հարկավոր է պատրաստվել, ուշ է արդեն, գիշերը կես։

—Մեկին խփին գլորվեց, սակայն իրեն չգտան,
—Ձին էր միայն վրնջում, փորում հողը ոտքերով,
—Սատանաներ դուք կարմիր, դուք իմ պլանը տարաք,
Գեներալն էր հայհոյում, տնակի մեջ շրջելով։

2.

Կես էր դառել գիշերը, ճամբա ընկան չորս նրանք,
Ուղղությունը վերցնելով Կարաուլա-սև Թափան-
Թնդում էին լեռները նրանց հուժկու քայլի տակ,
Բայց Գեղամի դասակն ընթանում էր հաղթական։

Ու մոխրագույն գայլի պես գիշերն անտառ է փախչում,
Իր հետևից թողնելով աղջամուղջի ծվեններ,
Իսկ դասակը Գեղամի, որ Թափի տակ էր հասել,
Լուսաբացի բացվելուն սպասում էր անհամբեր։

*
* *

Գնդացրորդ Ավագը դիրք էր բռնել ձորի մեջ,
Շրջապատել կամուրջը և սպասում հարձակման,
Պահակները թշնամու ընկել էին քնի մեջ,
Չորս կողմը լուռ էր կրկին ու բնությունն էր ամա։

Լուսաբացը գծվում էր, իսկ հորիզոնի վրա
Արեգակը գլխատված կարմիրի մեջ էր լողում,

Դեմքը փայլում էր մաքուր, ինչպես պայծառ լուսաբաց,
Ճերմակամազ ծերունին դարձել էր վառ պատանի։

Ու պատմում էր Ներսեսը, այդ ծերունին քաջասիրտ,
Պատմում բոլորն այն, ինչ իր ականջովն էր լսել,
Իսկ վաշտապետն արի լուռ լսում էր ամբասիր,
Ու հաղթության կարոտը սրտում նոր թև էր առել։

*
* *

—Յեվ կամուրջն այդ անվնաս հարկավոր է գրավել
Ու շարժվել այս գծով Կարաուլա սև Թափան,
Հիմա այնտեղ թշնամին բուն է դրել, ծվարել,
Պետք է խեղդել բնի մեջ դաշնակցական այդ բանդան։

Ու վաշտապետ Արսենը մարտիկներին իր անահ
Նորից իր շուրջն հավաքեց կորիճներին քաջարի,
—Դրությունը շատ լուրջ է—խոսքն ուղղեց Ալագին,
Պետք է դասակդ առնես ու շարժվես դու առաջ։

—Նենգ թշնամին բլրից, առած մի մեծ գումարտակ,
Լուսաբացը յերբ գծվի պետք է դիմի հարձակման,
Սև թշնամին ուզում է առնել մեզ կրակի տակ,
Իսկ յերբ դիմի նահանջի, պիտ կամուրջը պայթեցնի։

—Մինչ լուսաբաց, դու Ալագ, պետք է առաջ շարժվես,
Ու կամուրջը դու պետք է, որ գրավես անվնաս,
Իսկ դու Գեղամ, Թափի տակ թշնամուն կդիմադրես,
Մինչ Ալագը կամուրջից քեզ կհասնի օգնության։

Հասան նրանք նորից վաշտ, իսկ ձիերը փրփրած
Փնչում եյին կատաղի գետերի պես մոլեգնած,
Նրանք իջան ձիերից, վաշտապետին մոտեցան,
Ճակատներից քրտինքը ծորում էր վար, դեպի ցած։

—Ահա դարձանք, չեկանք մենք, սակայն Ազատն
ընկավ,
Վերադարձին ընկավ նա մի թեժացած գնդակով,—
Հեվհեվալով պատմում էր հետախույզը այդ անահ,
Որ քիչ առաջ թռչում էր վոնց թռչունը թեվավոր։

Ու իր ծոցից հանելով ճերմակամազ ծերունին
Դաշնակցական զորքերի ծրագիրը հարձակման,
—Պատուհանից գողացանք —ու նա հանձնեց Արսենին,
Սրբելով իր քրտինքը, զեկուցում է ծերունին։

Արսենի դեմքը փայլեց, սիրտը լցվեց խնդությամբ.
—Պատիվ նրան, վոր ընկավ. իսկ ձեզ վողջույն, քաջ
տղերք,
Վաշտապետը համբուրեց Ներսես բիձին, Արմենին.
—Այրեք տղերք, կամուրջը գրավեցինք անփաս։

—Դաշնակցական այդ բանդան վաղը առավոտ
լուսաբաց
Պետք է անցնի հարձակման, կրակի տակ առնի մեզ,
Խփելու չեն նրանք մեզ կարասուլի դիմացից,
Ու պայթեցնեն կամուրջը, յերբ վոր դիմեն նահանջի։

Զեկուցում էր Ներսեսը. քափ քրտինքի մեջ կորած,
Ու քրտինքը թափվում էր առյուծաբաշ ճակատից,

Յերբ արևը բարձրանա վառ նիզակներով իրա,
Համազարկը կպայթեր անդնդախոր այդ ձորում։

* * *

Սաստկանում էր կռիվը ու դառնում էր ամեհի,
Բարկ կրակը տեղում էր քաջ մարտիկների վրա,
Թնդանոթները կրկին կրակ ու բոց են թքում,
Ու թափում են կոկորդից և՛ թե արճիճ, և՛ կրակ։

Իսկ դասակն Ավագի կրակում էր, հարձակվում,
Շարժվում միշտ դեպի վեր, տարափի տակ գնդակի,
Թնդանոթն ամպի պես անձրև կրակ էր մաղում,
Իսկ դասակը քաջարի դիրքից դիրք էր նվաճում։

Թեժանում էր կռիվը գնդակների ձայնի տակ,
Թնդում էին լեռները ու տնքում են, «ախ» քաշում,
Իսկ կամուրջի վրայից թափվում էր դեռ հորդ կրակ,
Դաշնակցական զորքերը կրակում են համառում։

* * *

Սաստկացել էր կռիվը ու դարձել էր ամեհի,
Գնդացիրը հնձում էր դաշնակցական բանդային,
Կարծես կրակ են դարձել մարտիկները քաջարի,
Դաշնակցական զորքերը ընկնում են հար վիրավոր։

Ու ջոկատն Արմենի ձախ կողմն անցած թշնամու,
Իսկ աջ կողմից խփում էր քաջ դասակն Ավագի,
Յեվ զորքերը մեր կարմիր ողակել են թշնամուն,
Խուճապի յեն մատնվել դաշնակ զորքերը կրկին։

Դաշնակցական զորքերը գլորվում են անհամար,
Խելակորույս փախչում են՝ թողած խրամ ու դիրքեր,

Մարտիկները քաջարի, կարմիր, զորքերն անահ,
Միշտ առաջ են ընթանում ու առնում են նոր դիրքեր։

Նոսրանում են շարքերը դաշնակցական բանդայի,
Ու փախչում են ձորն ի վայր, թողնում գերի,
թնդանոթ,
Թողած կամուրջը՝ նրանք յետ են փախչում դիրքերից
Ու ամպերի հոտի պես հալածվում են սարից-սար։

Կարմիր զորքերն առան կամուրջը այդ անվնաս
Ու փողփողաց արնագույն կարմիր դրոշն այնտեղ,
Եվ հաղթանակի լուրը կայծակի պես տարածվեց։
—Դաշնակցական զորքերը ջախջախվեցին խելահեղ։

3.

Հենց այդ պահին Թաքի տակ թնդանոթներ
կատաղում,
Իսկ թշնամին աննահանջ կրակում էր դեռ էլի,
Մարտիկները Գեղամի դիմադրում են նորից
Ու օգնության սպասում քաջ դասակին Ավագի։

Արևի թուրը վոսկե որն էր արել ուղիղ կես,
Գնդակը դեռ տեղում էր Կարաուլի սև դոշին—
Կարմիր զորքերն ալի կրակ են դարձել ասես,
Գնդացիրի զարկերից ամպ է կապում շեկ փոշին։

—Իսկ ինչու չի ուշանում քաջ դասակն Ավագի,
Չէ որ նրանք կամուրջն անվնաս են գրավել—
Կրակում են ողերքը դիմադրում են արի
Ու սպասում անհամբեր, սպասում են Ավագին։

* * *

Կես գիշեր էր, յերկնքում ամպը զարկել էր վրան,
Ճամփա ընկավ Ավագի քաջ դասակը համարձակ,
Դեպի Թափան Կարաուլ, ուր թշնամին էր նստած։
Մարտիկները քաջարի գնում եյին հարձակման։

Լուսաբացն էր մոտենում․ կարմիր զորքերն արդեն
Պատրաստ եյին դուրս գալու թշնամու հետ դեմ առ
դեմ,
Դաշնակցական բանդային, վոր դուրս քշեն Թափայից,
Լուսաբացն էր մոտենում, այգը գծվում էր արդեն։

* * *

Ու յերբ արևը ցրեց աստղներն իր վոսկի,
Սկսվել էր կռիվը ու դարձել էր կատաղի,—
Դաշնակցական զորքերը ընկնում եյին գնդակից,
Քանի գնում կռիվը սաստկանում էր ավելի։

Դաշնակցական զորքերը գլորվում են, ու ահա
Խուճապի յեն մատնվել դաշնակցական զորքերը,
Կարմիր բանակը յելած գրոհում էր միշտ անահ,
Փռում գծերը նրանց ու նվաճում դիրք առ դիրք։

Ու փախչում են զորքերը դաշնակցական բանդայի,
Նահանջում են դեպի յետ, արյունոտված, ահաբեկ,
Յեվ թողնում են դիրքերը ու փախչում են Թափայից,
Փախչում անտառը դեպի, վոհմակների պես գայլի։

4.

Կարմիր զորքերը արի՝ լեռան կատարն առան
Ու զարկեցին գագաթին ալ վառվռուն մի դրոշ,

Փողփողում է դրոշը հաղթանակի ու վառման։
—Կարաուլա Թափայում հաղթանակը շողշողաց։

* * *

Երբ անցնում եմ դաշտերով, անտառներով այս խշշուն
Ու հասնում եմ Կարաուլ-Թափայի ժեռ կատարին,
Կամուրջին ու Թափային՝ նրանց տունն եմ հիշում—
Ու կռիվը կատաղի սև Թափայում անառիկ։

սեպտեմբեր 1937 թ.
Երևան

---

## ՅԵՍ ՊԱՇՏՊԱՆԵՑԻ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Նվիրում եմ շքանշանակիր սահմանապահ՝ ընկ. Ի. Տ. ՏՐՈՒՆՈՎԻՆ

1.

*Չորս կողմը գիշեր, չորս կողմն անտառ,*
*Յերկինքը ամպոտ, անաստղ, անլուսին,—*
*Սահմանն եր հսկում կարոտով անտակ*
*Մի սահմանապահ, հրացանն ուսին։*

*Անտառից այն կողմ գետն եր գաղաղած,*
*Բերում ափերն իր միալար հանգով,*
*Խոլ ալիքներն ել ափից բարձրացան,*
*Կարծես պարում են մի նոր յեռանդով։*

*Ծավալվում եր դեռ մութն անթափանց*
*Յեվ կարծես հյուսում դավերն իր մութ,*
*Յերկինքն ել վերից աչքերից սառած՝*
*Ուզում եր թափել արտասուքն անդութ։*

*Քամին ել կարծես շշուկ եր բերում,*
*Վոր գետի միջից, մութ ու նենգավոր—*
*Թշնամին արդեն սահմանն եր անցնում*
*Այս մութ ամպամած ծանր գիշերով։*

Սահմանապահը ձեռքն հրացանին
Շրջում էր նորից, հսկում էր արթուն
Սահմանը կարմիր, որ չար թշնամին
Չուղարկի մեզ մոտ լրտեսն՝ իր մարդուն։

2.

Արի զինվորն էր նայում խավարին.
Անձրևն էլ վերից մտրակում էր հար,
Վերցնում և նա քաշում է գլխին
Բրեզենտից կարված հագուստը հարմար։

Վերը, յերկնքում կայծակը փայլեց
Ու թափեց հրե կրակե անձրև.
Քամին անտառում շրջել սկսեց,
Գիշերում այս սև—խավարում անձև։

Նա էլ չէր լսում շշուկները նենգ,
Հագուստն էր ծածկել ականջ ու յերես,
Միայն աչքերն են վորպես հատու նետ
Սահմանն է կիտում փայլով սրատես։

Կարծես մոտիկից կանչում էր նրան
Մի ձայն հարազատ, այնքան մտերիմ,
—Ե՜, հե՜, քաջ զինվոր, սահմանի վրա
Արծիվի նման յեղիր սրատես։

Դա հայրենիքի ձայնն էր հարազատ,
Սերը սրբազան մեր հայրենիքի,—
Սահմանապահին տալիս կամք անպարտ,
Հսկի սահմանը սուրբ ու թանգագին։

3.

Արծաթ անձրևը դեռ շափշափում էր,
Երբ քամին նորից անտառը շրջեց,
Իսկ անձրևը հորդ դեռ մտրակում էր,
Մարմինը նրա՝ անձրևը թրջեց։

Լսում եմ լսում և՛ շշուկ, և՛ ձայն,
Որ բերում է դեռ քամին խելագար,
Ասաց,— և հենց իր աչքումն հրացայտ
Խավարը կիսեց, վոր իջել էր վար։

—Խանգարում են տես ծառերը խշշուն,
Որ քամու հետ միշտ վեճի յեն մտնում,
Հետո լսում է կարծես մի շշուկ—
Լռությունն է այն կողմը սրում։

4.

Նորից ամպերը տագնապախռով
Մարտի մեջ մտան յերկնքի ծոցում,
Իսկ կայծակը հուր ահեղ մտրակով
Խավարը կիսեց, փռեց լույսի ծով։

Յեվ հենց այդ պահին նշմարվեց կարծես՝
Գետից դուրս յեկան մի քանի ստվեր,
Փրփուրի նման հալվեցին անձեն
Այն տերևախիտ անտառում ահեղ։

Վառեց աչքերը վորպես լուսարձակ
Սահմանապահը՝ քաջ մարտիկն արի,

Ու նրանց հետքից նա առաջ անցավ,
Թաքնվելով մերթ հետևում ծառի։

Լրտեսներն ահա ոձերի նման
Սողում են դեպի խորքն անտառի,
Սահմանապահը, վորսորդ աննման
Հետևում էր միշտ անվախ ու արի։

Ու լրտեսները կանաչ թփերում
Ծվարեցին վոնց թուխսն իր ձտերով,
Ինչ վոր կապոցներ պահեցին թփում,
Իսկ մեկն էլ սողաց գետի յեզերքով։

5.

Սահմանապահը՝ Կոլյան այդ անահ,
Տեսնում էր նրանց իր աչքերով սուր,
—Ի՞նչ անեմ արդյոք յես, կրակ բանամ,—
Այս միտքը փայլեց վոնց արծաթե սուր։

Ու նորից կայծակ ու նորից անձրև,
Ծառերի խշշուն, գետն էլ պղպղած,
Թավալագլոր ալիքով անձև
Ափերն են քերում այնքան մոլեգնած։

—Արդյոք կարող եմ կենդանի բռնել,
Մտածում է նա, զինվորն այդ քաջ,—
—Ինչպես էլ լինի պետք է դիմադրել,—
Ասաց և սողաց նա դեպի առաջ։

—Կրակ կբանամ, ի՞նչ կուզի լինի
Ու կխնայեմ իմ փամփուշտներին,

Յեվ նա քարերից թաքստոց շինեց
Ու պառկեց այնտեղ՝ հրացանը ձեռքին։

—Նրանք վոտք դրին մեր հողի վրա.
Կվոչնչացնեմ ինչ կուզե լինի.
Ու նշան բռնեց թփերի վրա,
—Զղավաճանիս, մահերիմ շնիկ։

6.

—Ե՜յ, ով ես, ինչ մարդ, դուրս յեկ թփերից, —
Ասաց անվարան, հրացանն արձակեց,
Ու փոխեց իսկույն տեղը կրակի,
Յերբ յերկնքում մութ կայծակը շաչեց։

Պատասխան չկար, նա դարան մտած
Գնդակ արձակեց նորից ու նորից,
Յեվ տեսավ ինչպես հրացանն ուսած,
Բանդիտը յելավ թփերի տակից։

—Դու ինչ ես վոր կաս, ձեր ես ինձ գալիս,—
Ասաց ու մխեց գնդակը կրծքին.
Բանդիտը լռեց զարկվեց քարին,
Մյուսն էլ հետը՝ հրացանը ձեռքին։

—Զղավաճանիս, ընկեր հրացան,
Հարկավոր է քիչ փամփուշտ խնայել,
Հարկավոր է դեռ սահմանն անցած
Այդ լրտեսներին լուրջ դիմադրել։

Յեվ չնայած վոր կայծակ եր, անձրև,
Կոլյան, մարտիկն այդ՝ յերկու բանդիտի

Գլորեց գետին խավարում անձև,
Նա փռեց հողին թշնամու չար դին։

7.

Իսկ վաշտում արդեն տագնապը լսվեց.
Ալեքսինին առած իր ջոկն առի՝
Սլացավ առաջ, մտրակը շարժեց,
Յերբ ջոկը մտավ խորքն անտառի։

Իսկ Կոլյան, Կոլյան լրտեսների դեմ
Մարտի յեր մտել, գլորեց չորսին,
Իսկ ջոկը կարմիր. վորպես հատու նետ՝
Խավարն եր կիսում, կծկում արահետ։

Յեվ սրտում պահած վառ հաղթանակի
Հավատը մաքուր՝ չեր նահանջում յետ,
Անա գնդակը, վոր շաչեց ուժգին,
Թշնամու սրտում մխրճվեց ինչպես նետ։

—Ալեքսին կգա տեսնես օգնության,
Փամփուշտ քիչ մնաց, կպրծնի հիմի,—
Շշնջում եր նա, կամքով յերկաթյա
Ու դիմադրում անվախ, անահի։

—Ձիեր են գոփում, գալիս են կարծես.
Մերոնք են արդյոք, թե նենգ թշնամին,
Բայց չեմ նահանջի՝ բաց կանեմ կուրծքս,
Թեկուզ և լինեն նրանք թշնամի։

8.

Օգնության հասան նրանք Կոլյային
Իրենց ջոկատի մարտիկները քաջ,

Շրջապատեցին կանաչ թփերին,
Ուր թշնամին էր այնտեղ ծվարած։

Սկսվեց մարտը այնքան կատաղի,
Իսկ թշնամին բիրտ մի բուռ մարտիկով
Կրակում էր ու փոխվում տեղից
Դեպի գետ տանող նեղ արահետով։

Յեվ Կոլյան, հետո Ալեքսինն արի,
Ինչպես գնդակները նետվեցին առաջ,
Շրջապատեցին ամեն թուփ ու ծառ
Յեվ ճամբաները նրանց նահանջի։

—Կա՛նգ առեք այստեղ, ո՛վ եք և ի՛նչ մարդ,—
Մրրկեց ուժգին ձայնն Ալեքսինի,—
Ողակեց նրանց ջոկատը արթուն
Այդ բանդիտներին և՛ նենգ, և՛ զազիր։

Ու լրտեսներին բռնեցին նրանք,
Ութին վիրավոր, տասին կենդանի,
Իսկ լուսաբացը գծվում էր հրակ,
Յերբ նրանք տարան այդ լրտեսներին։

9.

Իր հերոսական գործերի համար,
Այդ մարտիկների վաշտապետը քաջ
Պարգևատրեց խիզախ Կոլյային
Քաջ հերոսների վողջ վաշտի առաջ։

Վոսկե ժամացույց տվեցին նրան՝
Սահմանապահին անվախ ու պարթև,
Իսկ Կոլյան, Կոլյան սրտով հուրհրան
Իր խոսքն ասաց վողջ վաշտի առաջև։

—Յես պարտական եմ մեծ Ստալինին,
Առաջնորդին մեր մեծ հայրենիքի,
Նրան, վոր խնդուն վառ կյանքն ե տալիս,
Յես պաշտպանեցի իմ հայրենիքը։

*Ոգոստոս 1937 թ.*
*Յերևան*

---

## ՓԱՌՔ ՅԵՐԿՐԻՆ

1.

Փառք քեզ, յերկիր դու մայր,
Ա՜խ, ինչպիսի յերգով
Փառաբանեմ յես քեզ—
Քո մարտերը հազար,
Արագընթաց վազքդ —
Պայծառ լույսի ներքո,
Յերկիր, հարազատ հող
Ու մայր դու անսասան։

2.

Թեև յերգն իմ թույլ է,
Յերկիր դու, բազմաուժ,
Քո կառուցման թափի
Ու քո աճի հանդեպ,
Դու յես ծնել նրան,
Տվել և՛ թափ, և՛ ուժ
Յեվ լուսաբաց զվարթ,
Վոր բացվել է արդեն։

3.

Ու յերկնքի ներքո,
Ինչպես ծովն անհուն,
Ածուխ ու գիշերից
Մինչև վառ լուսաբաց,
Մեր սրտերում և մեր
Հոգում ջինջ ջերմահուն,
Սրսկեցիր լինել
Զգոն ու անքարաց:

4.

Ով դու, յերկիր անհուն,
Իմաստության փարոս,
Մարմնացումը հույզի,
Մտքի, կամքի արեգ,
Դու քայլում ես առաջ
Ստալինյան ճամբով,
Ո՜վ դու, խիզախության
Ու փրկության արև:

5.

Իմ յերկիր համայն
Ու արգավանդ հողեր,
Ձեզ պտղատու ծառեր —
Դեպի յերկինք հառնած,
Դուք քամում եք վոսկե
Արեգակից շողեր,
Հղի օրորվում եք—
Բերրի, բերրի դարձած:

6.

Մեր հողերից քամած՝
Ամբարներ են լցվել,
Բերքը լույս քրտինքի —
Աշխատանքի գնով,
Կախան խաղողն է մեր
Արդեն վոսկեզօծվել,
Դեմից ժպտում են մեզ
Ուրախ նազով։

7.

Յերջանիկ ենք մենք այս,
Պայծառ այս աշխարհում,
Յերկիր, մենք մեր հողից
Վոչ մի վերշոկ չենք տա
Չար թշնամուն.
Դու, անվրդով կյանքի
Ու բերկրանքի գարուն,
Կամրացնենք դիրքերդ
Քո անխորտակ։

8.

Կպաշտպանենք յելած
Արևելքից մինչև,
Ուր արևն է ննջում
Վառ շողերը իրա,
Հեռո հյուսիսից ցուրտ,
Տաք հարավը մինչև,
Արթուն քեզ կհսկենք
Սահմաններիդ վրա։

9.

Ժողովուրդդ ցնծած
Վառ խոհերով լցուն,
Պայծառ կյանք է կռում
Ու լուսավոր մի բախտ,
Փոթորիկում, հրում
Յեվ թե ձմռանը ցուրտ,
Ո՛վ բազմազգի յերկիր,
Քո դաշինքով անխախտ։

10.

Յերկիր, ժողովուրդդ
Թեև բազմազգի յես,
Բայց և ունեն իրար
Սիրելու հորդ աղբյուր,
Յեվ բոլորն էլ ցնծած
Պաշտպանում են անգին
Ղեկավարին մեր մեծ—
Վառ ու հեղահամբույր։

11.

Նա վոր ունի կորով
Յեվ հայրական վառ սեր,
Նա վոր բերեց նոր կյանք—
Խնդութալից բարիք,
Կպաշտպանենք նրան
Այնքան ջերմ մի սիրով,
Մեծաանուն պայծառ—
Վառ հանճարին։

12.

Յերկիր, յես էլ ահա
Քո վորդին եմ ջահել,
Քո կաթովն եմ սնվել
Ու հույզերով անմար,
Իմ յերգերս առած,
Յեվ ձեռքով ջահեր,
Կպայքարեմ յես էլ
Հաղթանակիդ համար։

13.

Փառք քեզ, յերկի՛ր դու մայր,
Ա՜խ, ինչպիսի՜ յերգով
Փառաբանեմ յես քեզ—
Քո մարտերը հազար,
Արագընթաց վազքդ—
Պայծառ լույսի ներքո,
Յերկի՛ր, հարազատ հող
Ու մայր դու անսասան։

1936 թ.
Յերևան

## Ո Դ Ե Ն Ա

*Вся революционная Испачия чтит память комсомолки-героини Лины ОДЕНА, отважной помощницы Пассионарии. Она погибла, попав в засаду мятежников. Прекрасна и мужественна была ее жизнь.*

*(“Комсом. Правда„)*

*1.*

*Այնտեղ դիրքեր են ու արյան հեղեղ,*
*Վոր հոսում է խոր խրամատներում,*
*Արևն էլ վերից բաշով վոսկեղեն,—*
*Իր հուրն էր փռել կապույտ յերկնքում։*
*Դիրքերի կողքին,—սրտովն արևոտ,*
*Ընկավ Ոդենան, քաջ հերոսուհին,*
*Վառ ազատության մի պայծառ կարոտ*
*Նստել էր նրա հոգու ծալքերին։*

2.

Բարկ արևն ահա՝ ճառագներով իր ջերմ
Սանրում է նրա մազերը սև սաթ,—
Թափում է վերից վոսկեզօծ մի սեր
Յեվ դիզում հսկա խնդության մի սար։
Կարծես քնած է, դեմքով վոսկեգույն
Աղջիկը կլորիկ աչքերով պայծառ,
Կոմսոմոլկան այդ, իր մաքուր հոգում
Պահած հաղթության հավատը անչար։

3.

Անարգված ու նենգ ֆաշիստ Ֆրանկոն
Հնձել է ուզում քաջ ժողովրդին,—
Այն Իսպանիայի, վոր հերոսաբար
Յելած կռվում են կամքով իրենց հուր։
Ֆրանկոն, վարձկան հիտլերյան շունը,
Վոնց կարկտաբեր մռայլված մի ամպ
Ուզում է ջնջել, կորցնել փոշում
Մարդկության կերտած չքնաղ կուլտուրան։

4.

Ու ազատության կրակով արբած,
Պասիոնարիայի զավակ Ոդենան
Ընկնելու պահին մեղմիկ շշնջաց.
—Ընկերներն իմ հաղթության վրան
Կզարկեն ազնիվ Իսպանիայի վրա,
Իմ քույրերն ու յեղբայրները դեռ
Կ՛գան, կ՛ջնջեն կամքով անվարան,
Ֆաշիստ իժերին ու Ֆրանկոյին նեռ։

5.

*Այո՛, Ոգենա՛, քաղցր Ոգենա,—*
*Ընկար գնդակից թշնամու զազիր,*
*Քո հիշատակը յերկար կմնա*
*Աղբյուրի պես ջինջ—սրտերում կարմիր։*
*Յեվ մենք ել ահա մեր կամքով հատու*
*Քաջ խաղաղական ժողովրդի հետ*
*Մեր անարգանքի խոսքերն ենք նետում*
*Վարձկան շներին այդ արյունահեղ։*

*1937 թ․*
*Յերևան*

## ՅԵՐԳ ՍԱՎԱՌՆԱԿԻ

Խորհրդային ավիացիայի օրվան

1.

Առավոտն այս, վոր բացվում է խնդությամբ,
Ինչպես մանկան զույգ աչիկները կապույտ,
Իր մեջ ունի հաղթանակներ վառ, անամպ
Ու ջերմ արև, վոր կամարն է իր կապում։
Ահա յեկած այս առավոտ—անհամար—
Յերկաթաթև սավառնակներն են արի,
Վորոնց հիմա մարդկային ուժն այս անմար
Թև է տալիս ու մղում վեր ամպերից։

2.

—Դու սավառնիր, դու սլացիր, դու ճախրիր—
Քո թևերի ու քո սրտի մեջ է, վոր
Ստալինյան կամքը հզոր ու արի
Քեզ հանում վեր խիզախությամբ փառավոր։
Դեպի հյուսիսը սլացիր հեռավոր,
Կտրիր, անցիր լայն ծովերը սառցապատ,
Քեզ չեն հասնի արծիվները խոլապար,
Հեքիաթային Պեգասները թևավոր։

—Միշտ դեպի վեր, յերկաթաթև՛ իմ թռչուն,
Քեզ թամբել են հերոսներն իմ յերկրի,
Ահա նորից դեպի բևեռ են թռչում
Ստալինի զավակները քաջարի։
Առավոտն այս, որ բացվում է խնդությամբ,
Ինչպես վարդը կարմրաթերթ ու կարմրաթույշ,
Ծավառնում են արծիվները յերկաթյա—
Ու հնչում է նրանց յերգը քաղցրանույշ։

1937 թ.
Յերևան

* * *

Սիրելի Վահիդային

1.

*Կապուտաչ աղջիկն այս մեծանում է*
*Եվ չունի իր սրտում վոչ մի թախիծ,*
*Ահա նա ժպտում ու խաղում է*
*Եվ ասում է կարծես՝ «Նայեք ինձ»։*

2.

*Մեծացիր դու, բալիկ իմ, մեծացիր,*
*Ստալինյան այս պայծառ արևի տակ.*
*Մեծացիր, և դու լավ իմացիր, վոր*
*Պիտ լինես մի զինվոր մարտունակ։*

*1936 թ.*
*Արարատ*

---

## Վ Ա Ր Ը

### 1.

Դաշտերը սևցան, գարունը բացվեց,
Սիրտս էլ հենց այդ է շշնջում՝ նա ինձ,
Լեռան պռունգից իր շողը զարկեց,
Արևը կիզուն վողջունեց նորից։
Վորպես հասուն նուռ արևը կախվեց
Կապույտ յերկնքից, շաղ տալով իրա
Նուռ հատիկի պես շողերը, ցրեց
Լեռների ու մեր դաշտերի վրա։

### 2.

Իսկ հերկվորները յելան լիասիրտ՝
Հերկելու հողը։ Ահա թերթում են,
Գոռում են նրանք՝ ձուլված միասին,
Իսկ սևահողը լուռ սպասում է։
Խոփը խրվում է, ինչպես դանակը
Սև թխված հացի սիրտը կիսելուց,
Հողը պատռում է այդ կուռ բանակը,
Վոսկեհատիկը այնտեղ պահ տալու։

*1935 թ.*
*Յերևան*

# Ջ Ո Ւ Ր Ը

1.

Կապույտ լճակների նման փռված,
Ջուրը հոսում է յերկրիս դաշտերով,
Որ ջրի կրկին նա մեր ցանած
Հատիկներն այն՝ հողում պահված,
Որ նրանք աճեն, դառնան բերքի,
Լցվեն խրճիթներ, լցվեն տներ,
Չէ՞ որ թանգ է նա՝ քան թե վոսկին,
Որ փայփայեց կոշտ ձեռքերը մեր։

2.

Ո՜ ջուր, հոսիր դու, ո՜ ջուր, գնա,
Արծաթ ալիքդ դիր հասկի շուրթին,
Որ ծծի նա ու կուշտ հագենա,
Ինչպես յերեխան մորը գրկին։
Չէ՞ որ նա էլ է փոքրիկ մանուկ,
Նրան էլ պետք է լավ խնամել,
Որ բարձրանա նա, մենք անհամար
Լիություն պետք է նրանից քամենք։

1935 թ.
Յերևան

## ՊԱՐՏԻԶԱՆՈՒՀԻՆ

(Բալլադ)

1.

Գիշեր է մառ խավար,
Ու խավարի միջից
Ընթանում է դեպ վար
Ահա մի ձի։
Յեվ այդ ձիուն նստած
Մի պարտիզան աղջիկ
Սլանում էր սաստած
Գետի ափից.

Յեվ նա լուր էր տանում
Իրենց վաշտի մասին,
Իր հետևում թողած
Յե՛վ մարտ, և՛ ավին։

2.

—Իսկ դու սլանում ես՝
Ամուր կպած թամբից,
Գուցե նրանց փրկես
Գնդակներից։

* *

Բայց նա տեղ չհասած
Ընկավ գետի ափին,
Ցավ մի սուր ցավ զգաց,
Մնաց հողին։

Ձին էլ մնաց կողքին,
Չհեռացավ յերբեք,
Իսկ աղջիկը կարծես
Կյանքը թեքեց։

Նա յերբ ուշքի յեկավ՝
—Ո՜, սպիտակ իմ ձի,
Ի՞նչ ես մնացել այստեղ—
Կընկնես հնձից։
Ձին խրխնջաց—ասաց.
—Կհեռանամ, բայց չես
Հետո թամբիս առած
Կտանեմ քեզ։

3.

Ձեր անցել յերկար,
Ձին բերեց իր հետ
Յերկու կտրիճներ,—
Յերկու ահեղ մարդ։
Շունչը չեր փչել
Կտրիճ աղջիկը,
Նա բարձրացավ վեր
Ու լուռ շշնջաց.

—Այնտեղ մերոնք են
Մեռնում գնդակից—
Ո՜, հասնք նրանց,
Ազատենք մահից։
—Ցես ընկա այստեղ,
Բայց վոչինչ, վոչինչ…
Մերոնք թշնամուն
Կանեն բնաջինջ։

1935 թ.
Հոկտեմբերյան

## Խ Ո Ս Ք

*Մա՛յր յերկիր, հողում քո այնքան բերրի*
*Յերգեր են ծաղկել բերքերով առատ,—*
*Իմ կանաչ յերգն էլ քեզ նվեր բերի,*
*Սնիր դու նրան քո կաթով պայծառ։*
*Բողբոջ է յերգն իմ ու կարոտ այնքան*
*Մայր գուրգուրանքի—հարազատ խոսքի,—*
*Բողբոջն այդ արդեն առնում է նոր կյանք,*
*Ստալինյան ջերմ արևով վոսկի։*

*1937 թ.*
*Յերևան*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Հայրենիք իմ լուսեղեն . . . . . 7
2. Յերգ խորհրդային հայրենասիրության . 10
3. Յերգ առաջնորդի մասին . . . . 13
4. Մեծ մարդը . . . . . . 14
5. Մեր յերկրի աղջիկները . . . . . 17
6. Ո՜, վոսկեմազ իմ աշուն . . . . . 19
7. Մանուկներին . . . . . . 20
8. Մ ա յ ր ը . . . . . . . 21
9. Հ ո ւ ն ձ ը . . . . . . . 23
10. Յերգ արևի ու գարնան մասին . . . 25
11. Պուշկինյան գիշեր . . . . . 27
12. Կարա-Թափա . . . . . . 29
13. Յես պաշտպանեցի իմ հայրենիքը . . 42
14. Փառք յերկրին . . . . . . 50
15. Ո դ ե ս ա . . . . . . 55
16. Յերգ սավառնակի . . . . . 58
17. Սիրելի Վախդային . . . . . 60
18. Վ ա ր ը . . . . . . . 16
19. Ջ ո ւ ր ը . . . . . . . 62
20. Խ ո ս ք . . . . . . . . 66

Խմբագիր՝ Վ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Ավագյան

Գլավլիտի լիազոր Ա—3060. Հրատ. 4368. Պատվ. 1286. Տիրաժ 20
Թուղթ 72×110 տպագրական 2 1/8 մամ.
Մեկ մամուլում 51,200 նիշ. Հեղինակային 2 3/4 մամ.
Հանձնված է արտադրության 2 դեկտեմբերի 1937 թ.
Ստորագրված է տպագրության 5 հունվարի 1938 թ.
ԳԻՆԸ 2 Ռ.

Պետհրատի տպարան, Երևան,

Пров. 1940 г.
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գր
FL0041306

108

A I/5183

ԳԻՆԸ 2 Ռ.

Пров.

В. АРАМУНИ
Зеленые песни
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.